

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարադաշտացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովրդական խաղերը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Աւտորո-Ունդարիա: Անդրա: Արտաքին լուրեր:—
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՐԻՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Խառնապի ՄԵ-
ՎԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ոչինչ այնքան վտանգաւոր չէ, որքան
հասարակական կարծիքի իրանց առաջնորդ
անուանողների տղայամիտ մտաւոր զարգա-
ցումը, ոչինչ այնքան զգուշ չէ, որքան ինք-
նահաւան հրապարակաստների մէջ լռի-
կայի խորութեան պակասութիւնը, վայրի-
վերայ մտաւոր զարգացումը, ոչինչ այնքան
մոլորեցնող չէ, որքան լռիկայի տեղ, լռի-
կական սփռեալութիւնները:

Թիֆլիսից ոչ հեռու գտնվող մի գաւառի
միջոց երկու փա հիւանդանոցի ղեկավար են
գալիս ու կուռն են միմեանց դէմ, զօտե-
մարտ են անում: Տաս հազար հոգուց բաղ-
կացած ամբոխը, որի մէջ և բազմաթիւ
արիւնասիրտներ, նայում են այդ կուռնի,
հիանում են, ծափահարութիւններով և փո-
ղով են վարձատրում յաղթողին...

Եւ ահա հանդէս է դուրս գալիս տե-
ղական մամուլը իր խալի գաղափարներնե-
րով, իր մոլորեցնող լռիկայով և սկսում է

գովաբանել այդ վայրենի վարձուքները:
«Մենք թուլամորթ ենք, մեր նոր սերուն-
դը ֆիզիկական թուլ է, շատ գովելի են
այդ կուռնները և այլն և այլն»:

Ժողովուրդը կարգում է և հիանում է,
առանց նկատելու որքան լռիկայի բացա-
կայութիւն կայ, ո՞ր աստիճան մոլորեցնող
լռիկա, որքան վտանգաւոր սփռեալութե-
թիւն, որքան անմտութիւն կայ այդ խոս-
քերի մէջ:

Մեր դարը լուսաւորութիւն է պահան-
ջում և ոչ թէ մուշտի կուռններ, ասել ենք
մենք: Եւ այդ խոսքերին աւելացրինք թէ
ֆիզիկական ոյժի զարգացնելը ցանկալի է
նոյն իսկ անհրաժեշտ է, բայց զուգընթաց
գաւառ մտաւոր զարգացման հետ և ոչ թէ
ի միտս մտաւոր զարգացման:

Մեր հրապարակաստները ասում են,
«Մեր նոր սերունդը ֆիզիկական թուլ է,
մենք թուլամորթ ենք»: Շատ լաւ, համա-
ձայն ենք այդ մտքի հետ: Բայց ի՞նչ ա-
նենք որ ֆիզիկական զօրեղ լինենք, ի՞նչ
հէ՞, ոչ ի միտս մտաւոր զարգացման, ի՞նչ
անենք որ թուլամորթ չը լինենք:

Միթէ՞ այդ նպատակին կարող ենք հաս-
նել նրանով որ Գլխակի և Գոգաձէ կը
կուռն Գիզուբէի դաշտի վրա, իսկ մենք
հանդիսատես կը լինենք նրանց գոտեմար-
տին: Գրանով որ տաս հազար մարդ նայում

են, ինչպէս երկու, երեք մարդ շաբաթ մի
անգամ կուռն են, գրանով այդ տաս հա-
զար մարդու մէջ ֆիզիկական ոյժը չի զար-
գանալ:

Ի հարկէ այդպէս է, կասեն մեր խելօք
հրապարակաստները, բայց դուք ոչինչ
չէք համարում Գոգաձէի և Գլխակիի ցոյց
տուած օրինակը, նրանց վրա նայելով,
ամբոխն էլ կը ոգևորվի, նրանց օրինակին
կը հետևի և կը սկսի իր ֆիզիկական ոյժը
զարգացնել:

Հարկաւոր է միայն պատմութեան հետ
քիչ թէ շատ ծանօթ լինել հասկանալու
համար թէ որքան սխալ և մոլորեցնող է
այդ տեսակ լռիկա:

Ամենաթուլամորթ ազգերը, ֆիզիկական
ամենաանզարգացածները, նոյն իսկ այն
պերիօդների մէջ, երբ իրանք խորատու-
վում էին անբարոյականութեան ու հեշ-
տասեր կեանքի մէջ, ունեցել են հրապա-
րակական կուռններ, մուշտի կուռններ, գո-
տեմարտեր, կատաղած եղբերի դէմ կուռ-
ներ, ունեցել են զլաղատարներ: Բայց մի-
շտ որ զօրեղների մի շատ փոքրամիւս դա-
սակարգ էր զարգանում, ամբողջ ազգը հե-
զոտե՞նք ընկնում էր թուլամորթութեան մէջ
և միայն ուրախութեամբ էր հանդիսատես
լինում, ինչպէս վարձված մի քանի մարդիկ
կուռնում էին:

Այդ այլանդակ երեւոյթի ամենապայծառ
օրինակը կարող են մեզ համար լինել ան-
ցած դարերում թուլացած, փափկասեր,
հեշտասեր հոմայեցիները: Նոյնը մենք
տեսնում ենք այժմ... Թուլամորթ հրապա-
րակական խաղերի, նեպոլիտանցիների մօտ,
բայց մանաւանդ սպանիացիների մօտ: Ին-
քն սպանիական ամբոխը թուլամորթ է,
բայց շատ է սիրում նայել ինչպէս երկու
հակառակ միմեանց մէջ կուռն են, կամ
ինչպէս մի ուժեղ մարդ կուռն է մի կա-
տաղած եղի դէմ: Բայց դարերով հանդի-
սատես լինելով այդ տեսակ տեսարաննե-
րին, սպանիացի դարձեալ ֆիզիկական թուլ
է մնում, նրա ամբոխի մէջ չէ մտնում, չէ
ընդունվում, չէ տարրանում ֆիզիկական
ոյժի զարգացման դաշտի վրա: Ընդհակա-
ռակն այդ հանդէսները զարգացնում են
սպանիացու մէջ միայն վատ կրքեր, վտան-
գաւոր տեսարանների սերը, աւելի ոչինչ:

Գորան հակառակ շվեյցարացի և գեր-
մանացի ատում են գոտեմարտերի և այլ
սրանց նման կուռնների տեսարանները, բայց
խրաքանչիւր գերմանացի, իւրաքանչիւր
շվեյցարացի ինքն մանկութիւնից մարմնա-
մարզութեամբ ու զինավարժութեամբ է
պարապում, մասնակցում է իր երկրի իւ-
րաքանչիւր քաղաքի մէջ հիմնված բազմա-
թիւ «Turnverein» ասֆած մարմնամարզա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՍՍԱՑԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վրաստան զաղթած հայոց մէլիքներից աւելի
ուժ և նշանակութիւն ստացաւ Մէլիք-Բէգլարեան
Մէլիք-Արովը: Նա որպէս քաջ և պատերազմա-
սէր էր Վարաքսում, նոյնը եղաւ և Վրաստա-
նում: Բացի Վարաքսից իր հետ բերած հա-
տակներից, նա իր իշխանութեան ներքոյ հետը-
հետէ հաւաքում էր և այն զաղթականներին, ո-
րոնք Հայաստանի գանապաւն կողմերից փախչելով,
Վրաստանում ապաստան էին գտնում: Այսպի-
սով նա այնքան բազմացրեց իր ժողովրդի թիւը,
որ կարող էր ամեն անգամ մի քանի հազար ձիա-
ւորներ կուռն դաշտը դուրս բերել: Գրանով չը
բաւականաւոր, Մէլիք-Արովը աշխատում էր 1,000
հայ ընտանիքներ Արաքսի ափին վիճակից (որը այդ
ժամանակ օսմանցից իշխանութեան ներքոյ էր
գտնվում) տեղափոխել Վրաստան իր կալուած-
ների վրա: Այդ մտքով նա իր ձիաւորների խումբ-
բերով անգաղար արշաւանքներ էր գործում, անց-
նում էր Տաճկաստանի սահմաններից և ամեն ան-
գամ ահազին աւարով յետ էր դառնում: Շատ
անգամ նրա ասպատակները հասնում էին մինչև
Երզրումի պարիսպների մօտ: Եւ որովհետեւ այդ
բոլորը այն ժամանակ սովորական իրերի կար-
գում էր, այդ պատճառով Մէլիք-Արովի վստա-
հութիւններին սահման չէր դրվում:

Մէլիք-Արովը այնքան նշանակութիւն ստացաւ
իր քաջ ձիաւորների խումբերով, որ երկրի մէջ
վաճառականական յարաբերութիւնները ապահով-
դրութեան մէջ պահելու համար, և ճանապարհ-
ների վրա կարաւանների երթևեկութիւնը աւա-
զակների յարձակումներից անվտանգ պահպանե-
լու համար, յանձնվեցաւ նրան քաղաքական և շի-
ռութեան պաշտօնը: Այդ պաշտօնի նշանակու-
թիւնն այն էր, որ նա պիտի պահէր ճանապարհ-
ների վրա պահականադրներ, նրա ձիաւորները
պէտք է ուղեկցէին կարաւաններին մի իշխանից
մինչև միւսը, որ վտանգ չը պատահէր: Այդ հըս-

կողմից համար Մէլիք-Արովի մարդիկը իւրա-
քանչիւր բնուից հարկ էին տալիս 1 ռուբլ,
յօգուտ մէլիքի, որի տարեկան գումարը հասնում էր
500 թումանի *), որպէս խոստովանվում է Մէ-
լիք-Արովը իր նամակներից մէկի մէջ:

Այդ բոլորը նկատելով, վրաց իշխանապետ Ալեք-
սանդը անտնում էր Մէլիք-Արովի մէջ մի լաւ
օգնական իր նպատակները իրագործելու համար:
Գեղ Գիորգիի կենդանութեան ժամանակներում,
նա թափառում էր երբեմն Գաղտանի լեռնա-
քանդակների մէջ, երբեմն Վազախի և Շամշադինի
թաղամասների մէջ և երբեմն Երևանի կողմի-
նում, և ամեն տեղ զրոգւում էր մահմեդականներին
ուռնների և իր եղբոր Գիորգիի դէմ:

Նա շատ անգամ, թէ նամակներով և թէ ա-
ռանձին պատուիրակներ ուղարկելով, դիմում էր
Մէլիք-Արովին, առաջարկում էր միանալ իր հետ
և ուռնների հակառակ գործել: Թէև Մէլիք-Արովը,
հաւատարմի մնալով այն երզմանը, որ տուել էր
ուռնաց կառավարութեանը, ամեն անգամ մեր-
ժում էր իշխանապետ Ալեքսանդրի առաջարկու-
թիւնները, այսու ամենայնով, Թիֆլիսի ուռնա-
տիճանաւորները, կասկածելով նրա վրա, Մէլիք-
Արովին կալանաւորեցին: Նա մի քանի ամիս
մնաց բանտում, մինչև Վրաստանի համար նշա-
նակված միջխորտ կովալերների Թիֆլիս գալով
(1800), արձակեց նրան:

Մէլիք-Արովը ունէր երեք որդի՝ Ռօստօմ-բէկ,
Սայի-բէկ և Մանա-բէկ: Գրանցից իր քաջու-
թեամբ նշանաւոր եղաւ Ռօստօմ-բէկը:

XXXVIII.

1804 թին ուռնաց զօրքերը իշխան Յիցիան-
ովի հրամանատարութեան ներքոյ մօտեցան Ե-
րևանի պարսիկներին, բանակ դրեցին Էջմիածնի
մօտ: Մի և նոյն ժամանակ պարսկական բազմա-

*) 500 թումանը մօտաւորապէս հաւասար է
1,500 ռուբլու: Եթէ իւրաքանչիւր բնուից ստաց-
վում էր 1 ռուբլ, այդ հաշուով, ամբողջ տարվայ
մէջ Վրաստան մտնող և դուրս եկող միլիոնների
քանակութիւնը պէտք է համարել 1,500 բնու: Դա
ցոյց է տալիս երկրի այն ժամանակվայ վաճա-
ռականութեան ամենատարած առօրեայ վրա կանգ-
նած լինելը:

թիւ զօրքեր, պարսից թագաւորանոց Աբաս-Միր-
զայի անձնական հրամանատարութեան ներքոյ,
չտապեցին Երևանը ազատելու և Յիցիանովի
արշաւանքների առաջն առնելու: Պարսից զօրա-
պետների թուլութեամբ գտնվում էր վրաց իշխանապետ
Ալեքսանդրը մի քանի վրաց ազնուականների հետ:
Գրանք իրանց հետ առնելով մի քանի գունդ
պարսկական հեծելազօրքեր, և միանալով Վազա-
խի ու Շամշադինի թաղամասների հետ, և մի
կողմից էլ ապստամբներով լեզգիներին, բոլոր-
ովին կտրեցին Վրաստանի հաղորդակցութիւնը
Յիցիանովի բանակի հետ, որը գտնվում էր Երևա-
նի պարիսպների մօտ:

Յիցիանովը, որ կամենում էր պաշարել Երևա-
նը, ինքը պաշարման դրութեան մէջ մնաց: Պար-
սիկները ամեն կողմից չրջապատեցին նրան: Այդ
ժամանակ պակասեց Յիցիանովի զօրքերի պաշա-
րը: Թէև Էջմիածնի վանքը իր հացի ամբարներից
մեծ օգնութիւն մատակարարեց, բայց Յիցիանովը
կարօտութիւն ունէր և ուղղամիջերը, վառօդը
սպառվելու վրա էր, նրան պէտք էին աւելի շատ
թուփ թրջանօթներ:

Այդ միջոցին Մէլիք-Արովի որդի Ռօստօմ-բէկը,
իր սեպական հեծելազօրքերի խումբով, այլ և
իր հետ առնելով 500 ուռնաց զինուորներ, եր-
կու անգամ զարմանալի քաջութեամբ անցաւ
պարսիկների միջից, և Յիցիանովի բանակին Թիֆ-
լիսից վառօդ, թնդանօթներ և այլ ուղղամիջեր
հասցրեց:

Երբ նա այդ նպատակով պիտի կատարէր իր
երրորդ արշաւանքը, փամբակի ձորում, Ղուրսա-
լու գիւղի մօտ պատահեց պարսից զօրքերի:
Նրանց թիւը 800 հոգի էր, գտնվում էին փե-
րուլի-խան անունով մէկի գլխավորութեան ներ-
քոյ: Այդ միջոցին պարսից զօրքերի հետ միացաւ
վրաց իշխանապետ Ալեքսանդրը 3,000 ձիաւորնե-
րով: Ձը նայելով պարսից ուժերի անհամամատ
զինաւորութեանը, նրանք ամբողջ երեք օր կանգ-
նած մնացին և չէին վստահանում կուռն սկսել
Ռօստօմ-բէկի փոքրամիւս խումբի հետ: Երբ վեր-
ջապէս սկսվեցաւ կուռն, Ռօստօմ-բէկը ընկած
ուռնաց զօրքերի առջև, երկար քաջութեամբ
պատերազմում էր: Յանկարծ նրա ձին գնդակա-

հար լինելով, ցած զլորվեցաւ: Ռօստօմ-բէկը նրա-
տեղ մի այլ ձիու վրա, և կրկին նետուեցաւ կուռ-
նի մէջ: Ձը նայելով, որ նա արդէն երկու վերջ
էր ստացել, բայց տակաւին չարուճակում էր
կուռն: Երբ երրորդ վերջ ստացաւ, աչ ձիուքի վրա,
այդ ժամանակ արևմտադաշտ ցած ընկաւ: Նրա
ընկնելուց յետոյ պարսիկները մայր Կօնորա-
տեղին սպանեցին և ուռնաց բոլոր զինուորներին
կոտորեցին:

Ռօստօմ-բէկին տարան պարսից թագաւորան-
գի, Աբաս-Միրզայի բանակը:

Վրաց իշխանապետ Ալեքսանդրը լաւ ծանօթ էր
Ռօստօմ-բէկի հետ, ծանալում էր և նրա հօրը
Մէլիք-Արովին, որը, ինչպէս ցոյց տուինք նախըն-
թաց գլխում, մերժեց Ալեքսանդրի առաջարկու-
թիւնները, երբ նա խնդրում էր միանալ իր հետ,
ուռնների հակառակ գործելու համար: Այժմ յա-
մառ մէլիքի աւելի ևս յամառ որդին, առաջնորդ-
դելով ուռնաց զինուորներին, ընկաւ թշնամու
ձեռքը: Ալեքսանդրը կամեցաւ հօր վրէժը առնել
որդուց: Եւ առաջուց տեղեակ լինելով, թէ պար-
սից թագաւորանոց Աբաս-Միրզան որ ստորիճան
ատելութիւն ունի դէպի Վարաքսի մէլիքները,
որոնք Աղա-Մամադ-խանի սպանման պատճառը
դարձան Շուշի բերդում,—այդ մտածութեամբ,
իրեն մի լաւ առարկայ Աբաս-Միրզայի վրէժինը
րութեանը բաւականութիւն տալու,—Ալեքսան-
դրը ուղարկեց Ռօստօմ-բէկին Աբաս-Միրզայի մօտ:

Պարսից թագաւորանոց իսկոյն սպանել չը
տուեց նրան, այլ չղթալկալ ուղարկեց Թաւ-
րիդ հրամայելով, որ այնտեղ բանտարկին և
խնամը տանին նրա վերջերը բժշկելու համար:

Այդ հերոսը երեք ամիս բանտարկված մնաց
Թաւրիդում: Մի և նոյն բանտում կալանաւորված
էր այդ ժամանակ Էջմիածնի ուռնաց կուռնակից
Գանիէ կաթողիկոսը: Այդ վերջինը յետոյ թաւ-
րիդէն Երևան-աղայի երաշխաւորութեամբ ա-
զատվեցաւ: Բայց Ռօստօմ-բէկը մնաց բանտում
այնքան ժամանակ, մինչև Աբաս-Միրզան ուռն-
ներից յաղթված, և բարկացած, վերադարձաւ
Թաւրիդ: Նա իսկոյն տուեց քաջին դահիճներ
ձեռքը և հրամայեց զլխատել նրան: Թաւրիդի
հայերը մեծ սուգով նրա մարմինը թաղեցին ի-

կան ընկերութիւններին, ամբողջ երիտա-
սարգութիւնը, ինչ դասակարգի և պատկա-
նէր, հանդէս է դուրս գալիս մարմնամար-
զական ժողովներին, կօնգրէսներին մէջ, որ-
տեղ իւրաքանչիւրը ցոյց է տալիս իր Ֆի-
զիկական ոյժը, զինավարժութեան, ձիար-
շաւի, մարմնամարզութեան, հրացանաձու-
թեան մէջ իր ընդունակութիւններն ու
ճարտիկութիւնները:

Մարմնամարզութիւնը, մարմնի ֆիզիկա-
կան ոյժի վարժութիւնը ամբողջ, մե-
ծամասնութեան մէջ ժողովրդացնե-
լու համար հարկաւոր են կանոնաւոր
զինաստիկ և զինավարժութիւն
ամեն դպրոցներում, հարկաւոր են զինաս-
տիկական ընկերութիւններ հասակ առած-
ների համար, իսկ միայն հանդիսատես
լինելով ուրիշներին կուսին, որ և ինչ երկու
հասկանքի կոնկրետներն, ժողովուրդը եր-
բէք չի վարժեցնի իր ֆիզիկական ոյժերը:
Բայց մեզ կասեն թէ ամբողջ ժողովուրդն
էլ թող նոյնն անի, ինչ որ անում է մի
Գլխաւոր կամ մի Գոյնաձէ: Գորան մենք
կը պատասխանենք որ այդ տեսակ պա-
հանջ, ամենաբնական ասենք, տղայամիտ է,
անիրազորելի միամտութիւն է: Հսկանքը,
ուժեղները, փահլէժները, զարդաւորները
բացառութիւններ են ամեն մարդկային հա-
սարկութեան մէջ, նրանք հրապարակական
հանդէսների համար միայն լաւ են, իսկ
ամբողջ ամբողջ երբէք չէ կարող հասնել
նրանց հրէշաւոր ոյժին: Նրանք մարդկու-
թեան մէջ հրէշներ են, որոնց ֆիզիկական
ոյժը զարգացած է ի վնաս ամեն մտաւոր
ընդունակութիւններին: Եւ դժբաղդութիւն
էլ կը լինէր եթէ ամբողջ մարդկութիւնը
այդ տեսակ հրէշները բաղկացած լինէր:
Այն ժամանակ կարելի էր մնաս բարեաւ
ասել մարդկային ցեղի մտաւոր զարգաց-

մանը, քաղաքակրթութեանը: Իսկական կու-
տուրական մարդը պէտք է ջանայ հաւա-
սարկչութիւն իրազորել իր մտաւոր և
ֆիզիկական զարգացման մէջ:

Ինչ ուզում են թող ասեն բնութիւնները,
որոնց համար մի տգէտ, կօպիտ, վայրենի
զրկանքի, որի մէջ միայն ֆիզիկական ոյժ
է զարգացած, ամենաբարձր իդէալ է կազ-
մում, բայց մեզ համար իդէալ է բուն
կուլտուրական մարդը: Մի լուսաւոր-
ված բանւոր, կամ իր ֆիզիկական ոյժերը
անընդատ կերպով զարգացնող մի զինաս-
կան,—հա կուլտուրական մարդու իդէալը:

Ահա ձեզ օրինակներ: Մի եւրօպացի բան-
ւոր, որ ֆիզիկական էլ ուժեղ է, որ ուսում
է արել մի ժողովրդական դպրոցում, որ մի-
շէ կեանքի վերջին շունչը կարգում է լրա-
գիրը, զիջքը, մասնակցում է բանւորների
ժողովներին, պաշտպանում է իր դասակար-
գի շահերը, հասկանում է իր երկրի քա-
ղաքականութիւնը, հետաքրքրվում է մարդ-
կութեան առաջադիմութեամբ, ունի ամեն
հասարակական երևոյթների վրա իր սեփա-
կան հայեացքը, իր համոզմունքը, պատկա-
նում է մի յայտնի կուսակցութեանը, մի
և նոյն ժամանակ մարմնամարզութեան ըն-
կերութեան անդամ է, գիտէ զինավարժու-
թիւնը, իր հայրենիքի պաշտպան է, որպէս
պարտադիր զինւոր...:

Մի այլ օրինակ: Աշխարհահռչակ Հէյմ-
հօյզ զինասկանը, որ զիւտեր է անում Ֆի-
զիկայի, մարմնամարզութեան և բնական գիտու-
թիւնների մէջ, մասնակցում է իր հայրենի-
քի բոլոր հասարակական մտաւոր շարժում-
ներում, բայց մի և նոյն ժամանակ վեր է
կենում վաղ առաւօտ, և արդէն բազմա-
թիւ ընտանիքի տէր մարդ լինելով իւրա-
քանչիւր առաւօտ սառը բաղնիք ընդունե-
լուց և մարմնամարզութիւն անելուց յետոյ

մի քանի ժամկայ դրօսանք է անում ոտով
քաղաքից դուրս դաշտերում, գիւղերում և
այնուհետեւ ամբողջ օր պարապում է իր
գիտութեամբ, դասախօսութիւններ է կար-
գում ուսանողների համար և դեռ ճաշից
յետոյ ժամանակ է գտնում երաժշտութեամբ
պարապել և հետեւի եւրօպական զեղար-
ուեստական զրախնութեանը:

Այդ հետեւանքներն մարդկութիւնը հա-
սել է զարգացնելով իր մէջ հաւասար
կերպով ուսումը և ֆիզիկական ոյժը և ոչ
թէ զլաւի առօրն երկրի կոնկրետով որ-
տեղ երկուսը վայրենի կերպով կուսում են,
իսկ տաս հազարը հիացմունքով հանդիսա-
տես են լինում և փողով են վարձա-
արում յաղթողին, որ քիչ է մնում սպա-
նում է իր հակառակորդին:

Գլխաւորների կոնկրետ չէ կարող ֆիզի-
կական զօրեղ դարձնել ամբողջ ազգը, ա-
մեն մարդ չէ կարող իր ոյժը զարգացնելու
համար, եթէ այդպէս կարելի է ասել, զբը-
վել զարդաւորների դասակարգը: Փահլէ-
ժանների պէս հրէշները ամեն տեղ բացա-
ռութիւններ են կազմում: Ամբողջ նոր սե-
րունդի բոլոր անհատները չեն կարող փահ-
լէժաններ լինելու:

Մեր փառացած հասարակութիւնը ուրա-
խութեամբ գնում է նայելու ինչպէս երկու
հասկանքի միմեանց դէմ կուսում են,— և չէր
էլ գնայ նայելու եթէ նրանք կարգից դուրս
ոյժեղ մարդիկ չը լինէին,— իսկ արհամար-
հում է մի մարմնամարզական դահլիճ,
որտեղ դպրոցների աշակերտներն ու աշա-
կերտահիւները կարողանային կանօնաւոր և
վայելուչ կերպով վարժեցնել իրանց ֆիզի-
կական ոյժերը:

Մեզ հարկաւոր է մտաւորապէս և ֆի-
զիկական զարգացած երկու սեռի թարմ
նոր սերունդ, բայց մեզ հարկաւոր չեն վարձ-

ված զլազիստորների կոնկրետ, որպէս զուար-
ճացնող հանդէսներ անդործ արխատակա-
տիայի, կամ տղէտ ու կօպիտ ամբողջ հա-
մար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Правит. Вѣстн.» հաղորդում է որ փոխա-
դարձ կրեդիտի ընկերութիւններին թող է տուած
կարճ ժամանակեայ փոխառութիւններ անել զիւ-
ղական հասարակութիւններին և զիւղացիների
ընկերութիւններին:

«Русский Курьеръ» լուսն է հաւաստի աղբիւ-
րներից, որ յուլիսի սկզբներում կ'ունի Լօրիս-Մէլի-
քով գալու է ամառանոցից Ս. Պետերբուրգ և
այդտեղ ստանալու մի նշանաւոր պաշտօն:

Ս. Պետերբուրգում լուր է տարածված որ ֆի-
նանսների միւնիստր Բունդէ թողնելու է իր պաշ-
տօնը և նրա տեղը նշանակվելու է Սօլսկից:

Շնորհակալութեամբ տոնացանք «Լա էլ իմ սա-
ղը» վերնագրով Սիմէոն Սաֆարանցի բանաստեղ-
ծութիւնների ժողովածուն: Տպված է Թիֆլիսում
Մովս. Վարդանանի և ընկ. տպարանում, ներ-
կայ 1882 թվին:

Մեզ ինքզուրմ են յայտնել որ Կարապետ վա-
ժապետ Բէլախանց այժմ բնակվում է Կօջօրի
ամառանոցում պ. Փրիզմանցի տանը և ցանկա-
նում է պահել իր մօտ երկու կամ երեք աշակերտ-
ներ հայոց հին և նոր լեզուով նրանց հետ պա-
րագիւլ համար: Աշակերտները մի և նոյն ժա-
մանակ կը կերակրվեն վարժապետի մօտ, վճա-
րելով իւրաքանչիւրը օրական 1 ռուբլ թէ դասե-
րի և թէ սեղանի համար:

Մեզ պատմում են որ Թիֆլիսի Սէյդաբաթ
կոչված թաղում այս օրերս մի 14 տարեկան,

բանց եկեղեցու բակում գտնված գերեզմանատ-
նում, և սովորեցրին իրանց զաւակներին երգել
մի երգ, որը ինքը երիտասարդը զրել էր բան-
տում եղած ժամանակ: Նրեում է, Վարաբազի
հերոսը որքան յաջողակ էր զէնք գործ ածելու
մէջ, նոյնքան հմուտ էր և բանաստեղծութեան
մէջ: Այժմ այդ երգը բոլորովին մոռացված է:
Վաղեմի տխուր յիշողութիւնները կրկին զար-
թեցնելու համար, մենք կը գնենք նրա ամբողջ
օրինակը:

- «Մոտենտիկն ի ձայն բարձր աղաղակի,
- «Փանտ դահիճն սուր ի ձեռն անյաղ սրէ,
- «Վաղեր հանգոյն զիմ կենաց թել կարել խնդրէ,
- «Ի կախաղան և կամ ի սպանդ,— ուր զիս
տանէ:
- «Քաղաքս համայն մահմեղական, աստ խուռն
գան, զիմ մահ սգան,
- «Գրանաղին լան զիս Աբովյան» բաժ ախոյեան:
- «Իմ թէ չկը ոք աստ քրիստոնէայ, զիս փրկեցնէ
- «Յայտ ամենի և մահադոյժ վայրագ դահճէ:
- «Նոյնը զանմեղ արիւն թափել, յէր ցանկայ,
- «Նուիրական զինման իմոյ լերուք վկայ:
- «Սէր հայրենեացի թշնամեաց ձեռս մատնեաց,—
ուրախ մեռայց,
- «Եւ դասեցայց ընդ դիւցազանց իմոց նախնեաց:
- «Փշրանք մնացեալ եւ սիրելի հայոց ազգի,
- «Որք գտանիք ի ձեռս պարսիկ յայս քաղաքի,
- «Մի մոռասջիք պատմել և զայս յորդոց յորդի,
- «Թէ քաջն Ռօստոմ վառն հայրենեաց ի սպանդ
վարի:
- «Թէպէտ ցաւիմ զի չմեռանիմ ի մարտ ընդդէմ
թշնամեաց իմ,
- «Այլ յօժարիմ, զի գոհ լինիմ այսպէս վնեմ:
- «Այս քաջ բաղունք յարեաց պարսիկ հակայ
հօրսս
- «Տապաւատ արկին ի բազում նուազս հարկաւ-
որս,
- «Աւաղ, կնատ անգութ դահճի եղէ ես որս,
- «Պատմեալք զայս վնէ դիւցազն» զառամնալ
հօրս:
- «Քաջ նահապետ որդիդ միակ ի ձեռս վայրագ
պարսիկ էանկ,
- «Իւր յաղթանակ մահ գոնդակ էառ պսակ:

«Մեծը յարեաց, աղբայորդիդ Աբաս Միրզա,
«Սուր ի ձեռն դահիճն հէգ առ ընթեր կայ,
«Ձիս թշնամիս քոյոյ աղղի պարտատ ի մահ
«Ձիւրդ կամիս սպանանի» չուս հրամայեալ:
«Միայն սգամ, զի կապալ կամ. թէ միւսան-
գամ հրացան, սուր իմ
«Ի ձեռս ունիմ,— զբազունկ իմ ձեզ ցուցա-
նեմ»....

Սիրելի որդու աղետալի վախճանից յետոյ,
նրա աւերոյ հայրը, Մէլիք-Արմուր, երկար չապրեց:
Ներուրի հերոսի վերջին օրերը անցան ցաւերով
և տրտմութեամբ...:

Ահա ինչ է գրում Նա Ս. Պետերբուրգ իր 1807
թ. նոյեմբեր 23-ի նամակի *) մէջ աղա Միլաս
Ղաղարեանին, որին, Յովսէփ արք-հայրակոյտի
վախճանից յետոյ, ստեղծ զիւրմ էին Վարա-
բազի մէլիքները, իրանց զանազան վշտերը յայտ-
նելով:

«Իմ մատուցած մեծ ծառայութիւնները Ռու-
սաստանի սուրբ դահին և Շուշիում իմ ցոյց
տուած քաղաքագործութիւնները, դեռ Զօբով զօրա-
վարի ժամանակից—բոլորին յայտնի են: Կարելի
է, որ ձեզ ևս անյայտ է, թէ որպէս հաշտական
արիւնք և ցրվեցնել երկրի երեսին Աղա-Մամադ-
խանի ահարկու զօրախումբը: Այս պատճառով Հե-
րակ թագաւորը, կամենալով մեզ (Վարաբազի-
մէլիքներին) իրան օգնական ունենալ, երդումնե-
րով և թղթերով հաւատացրեց մեզ, որ զայինք
նրա մօտ, բնակվէինք նրա տէրութեան մէջ, և
համարվէինք հաւասար նրա առաջնակարգ թա-
ղաքի ու կենտրոնների հետ: Մենք եկանք: Իր
խոստման համաձայն թագաւորը տուեց մեզ Բօլ-
նիսը, իսկ իր պալատում մեզ տեղ նշանակեց
իր բոլոր առաջնորդի բարձր Մեր մի աչալիսի
զորութիւնը տեղի Հերակի և Գիօրգիլի թագաւո-
րութեան ընթացքում: Իսկ այժմ մենք զրկված
ենք թէ հողից, թէ կալուածներից և թէ յարգան-
քից. որովհետեւ ամենքը նեղացնում են մեզ, աշ-

խատում են խել մեզանից Բօլնիսը և պահան-
ջում են տասներորդ մասը մեր հունձքերից: Այդ
բոլորը այն ատիճան անախտ է մեզ, որ մենք
այսուհետեւ ամենին ցանկութեւն չունենք այլ ես
բնակվել այստեղ (Բօլնիսում): Երբ որ ես չլինու-
թիւններով և բնակչներով ծաղկեցրի այդ գաւա-
ռը, մաքրեցի նրան բոլոր թշնամիներից և վա-
րենիներից,— ապա այսուհետեւ միայն յայտնվե-
ցան զանազան տէրեր, որոնցից մէկը տէր է կանդ-
նում ջրանցքների, միւսը աշխատում է սեպհա-
կանացիներ իրան լուսնի, երրորդը—հօրը... Այդ
բոլորից յետոյ, եթէ Բօլնիսի բոլոր քաղաքը ոսկի
դահուալու լինէր, այն ժամանակ ես, հրաժարվե-
լով կը հրաժարվեմ այդ երկրից: Ոչ փող մնաց
մեր քանկներում և ոչ համբերութիւն... մեր օրե-
րը անց ենք կացնում առնական տեղերի դժու-
րում, և ոչ մի տեղից օգնութիւն չենք գտնում...:

«Այդ բոլորի առիթով և մատուցի յանուն
կայսրի ամենախոնարհաբար խնդրի, որպէս զի
ամենաողորմածաբար թող արվի մեզ մեր ժողո-
վրդի հետ տեղափոխվել մեր հայրենիքը՝ Վարա-
բազ, ապրելու և բնակութիւն հաստատելու այն-
տեղ: Բոլորը, ինչ որ ես թղթի վրա խոստացել
եմ ամենաողորմած թագաւորին, մի և նոյնը այժ-
մանից երդումով խոստանում եմ կատարել յօ-
գուտ արքունի գահձարանի:

«Որքան մեծ է եղել իմ ծառայութիւնը իմ ա-
մենաողորմած թագաւորին,—այդ մասին դեռ չը
գիտէ բարձր կառավարութիւնը: Այլ ես ինչ է
մնում ինձ անել: Ունի ես անդամակ ուրդը—
Ռօստոմ-բէկը, իմ ձերութեան զաւակը և իմ նախ-
նեաց ժառանգը, և նրան ես զոհ բերեցի իմ ամե-
նաողորմած և ինքնակալ կայսրին...: Ինչ որ ես
գործել եմ և ինչ որ այժմ կատարում եմ, զրանից
աւելին ոչ ոք կարող չէ անել:

«Ես ունեմ մի կաթիլ արեւն, և այն ամեն բո-
ւայէ պատրաստ է թափվելու իմ թագաւորի ա-
նուն համար: Կրանից աւել էլ ինչ կարող եմ
անել ես:

«Իսկապէս երևում է մի բան միայն, այն է,
որ ես հայ եմ, և այդ պատճառով բոլոր զիւրա-
ւոր համախոսարարներ և զօրավարները չարանում
են ինձ վրա, իմ կատարած յաղթութիւնների և

քաղաքագործութիւնների համար: Իմ գործողութիւն-
ների մասին նրանք չեն կամենում տեղեկութիւն-
ներ տալ, ուր որ հարկն է, որովհետեւ ցանկանում
են, որ ես յուսահատվեմ և տիրութիւնից մեռ-
նեմ անյայտութեան մէջ: Աստուծոյ օգնութեամբ
այդ չի լինի: Մինչև գերեզման չը մահնեմ, տըլի-
ւութիւնը և յուսահատութիւնը չեն կարող վնա-
տեցնել ինձ: Ընակաւաւն, ես և այսուհետեւ նը-
պատակ ունեմ կատարելու այնպիսի յաղթու-
թիւններ, որ զորանցիկն բոլորին: Իսկ գերեզ-
ման կը մահնեմ իմ քաղաքագործութիւնների և ա-
րիւթիւնների ժամանակ, երբեք չեմ մեռնի տը-
կարների ու հիւանդների նման, որոնք հողի են
տալիս անկողնի մէջ:

Յետոյ մի առ մի թուելով իր կատարած ծա-
ռայութիւնները Ռուսաստանին, ձերուրի հերոսը
աւելացնում է.

«Ես չառ անգամ ինդրել եմ կոմսին (Գուդո-
վիչին) որ թող տայ մեզ, Մէլիք-Յուսուֆին նման
տեղափոխվել մեր հայրենիքը՝ Վարաբազ: Բայց
նա չը յօժարվեցաւ, պատասխանելով, որ եթէ
մենք թողնելու լինենք այդ երկրի (Վրաստանը),
այն ժամանակ Բօլնիսը կը ոչնչանայ, իսկ ախալ-
ցխացիները, լեզլիները և այլ վայրենիներն ու
աւաղակները կը ոչնչացնեն Թիֆլիսի չըջակայ
գիւղերը: Բայց երբ որ մենք ասում ենք, որով-
հետեւ Հերակը թագաւորը չնորհէ է մեզ Բօլնիսը
իր բոլոր հողերով, ջրերով, անտառներով և այլ
պատկանելիքներով,— ուրեմն խնդրում ենք ձեզ,
որ այդ բոլորը հաստատեք մեր անունով: Այն
ժամանակ կ'ունը մեր պահանջին պատասխանում
է, ասելով, ես չեմ կարող ուրիշներ կալուածնե-
րը տալ ձեզ, և դրա նման խօսքեր: Ես չեմ կա-
մենում ձանձրացնել ձեզ բոլոր մարմնամուտ-
ութիւններով...:

Վերջացնում եմ նամակը, խնդրելով Ղաղարեա-
նի միջնորդութիւնը կայսրի մօտ, իր առաջարկած
մի քանի պահանջների մասին, որոնց մէջ դառ-
նացած ձերուրին առանձին կերպով շնչում է,
որ թող արվի իրան իր հպատակների հետ վերա-
դառնալ Վարաբազ:

(Կը շարունակվի)

նոր նշանված հայ օրինոր անձնատպանութիւն է գործել ինքն իրան կախելով մի չունի վրա: Ասում են որ խեղդվելու պատճառն էր նրա պատաւարութեանը դիպչող մի քանի վերադարձական խօսքեր իր մօտիկ հարեանների կողմից:

Թիֆլիսի խարիւրու կողմից թաղը բռնկի և զեղատան մեծ կարօտութիւն է գրում: Պատահում է որ մի մարդ այդտեղ յանկարծակի կերպով հիւանդանում է և ահա այդտեղ բռնկի չը գտնելու պատճառով, ճարահատված հիւանդը ստիպված է կամ ինքն զնալ Թիֆլիս կամ բերել տալ քաղաքի կենտրոնից մի բժիշկ: Մեր բժիշկներն էլ կամ ամենին չեն գնում խարիւրուի պէս հեռու ընկած թաղը, կամ եթէ գնում են, վիզիտի համար 5 ռուբլ են պահանջում: Ասեմք թէ ոճեւոր մարդիկ կարողանան այդ կերպով բժիշկ բերել տալ և փոքր ի շատէ օգնութիւն հասցնել իրանց հիւանդին, թէ և այն էլ պէտք է ասած, որ խարիւրուը այնքան հեռու է քաղաքի կենտրոնից որ շատ անգամ մինչև բժիշկի գալը հիւանդը արդէն մեռնում է: Բայց ինչ պէտք է անի թաղի աղքատ դասակարգը, որ մեծամասնութիւն է կազմում խարիւրութեան: Ժամանակ կը լինէր արդէն ուր որ հարկն է մտածել մի մշտական բժիշկ նշանակելու խարիւրու թաղում և այդ հեռաւոր թաղի մէջ էլ մի զեղատուն հաստատելու:

Լրագիրներում կարդում ենք որ յունիսի 1-ին Բարձրագոյն հաստատված է նոր մարքային տարիֆ, որ կը գործադրվի յունիսի 1-ից: Այս նոր տարիֆից երևում է, որ շատ ապրանքների վրա, որոնց վրա առաջ մաքս չը կար նշանակված, այժմ յայտնի մարքին կենթարկվին: Մի քանի տների վրա էլ մաքսը աւելացրած է: Քարածուխը, ինչպէս առաջ, մաքսից ազատ մուտք կունենայ արտասահմանից:

Ներկայ տարվայ մաքսային հարկից ստացված արդիւնքը Ռուսաստանում, մինչև յունիսի 17-ը եղել է 26,880,012 ռուբլ: Այդ գումարը անցնալ տարվայ մաքսային եկամուտից 9,317,594 ռուբլով աւելի է:

Լրագիրներում կարդում ենք որ Ս. Պետերբուրգի ուսուցիչ տուրք Սինօդի կարգադրութիւնը՝ արգելել ոչ—ըրիտոնեաներին վաճառել տուրք պատկերները և խաչերը, պետական խորհուրդը վաւերացրել է:

Եզրպատկան հարցը վճռելու համար Կ. Պոլսում կայացած եւրոպական կոնֆերանցային մասնակցելու համար ուսուցիչ կառավարութիւնը ուղարկել է պ. Նովիկովի փոխարէն պ. Նելիդովին, որպէս արտակարգ ղեկավար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՏՐՈՒՆԳԱՐԻԱ

Վիեննայի մէջ հրատարակող „Fremdenblatt“ լրագիրը մի յօդուած տպեց, որի մէջ, ինչպէս կարծում են, անց են կացրած աւստրիական կառավարութեան հայեացքները եզրպատկան հարցի վրա: Այդ յօդուածի մէջ ասված է. «Կոնֆերանցային գումարումը, որ կայացաւ, չը նայելով Բ. Գրան բողոքող շրջաբերականին, ապացուցանում է, որ մեծ պետութիւնները յոյս ունեն համոզել սուլթանին, թէ նրա երկիրը անհիմն է: Իսկապէս պետութիւններից ոչ մէկը մտադիր չէ փնտ հասցնել Բ. Գրան իրաւունքներին կամ նրա շահերին: Եթէ Բ. Գուռը այնու ամենայնիւ յաւանութեամբ կը մերժէ համաձայնութիւն կայացնել միջպագային կոնֆերանցային հետ և մտադիր է օգտվել մի անսպասելի հանգամանքից, որ խախտէ արևմտեան պետութիւնների օրինական իրաւունքները, նա չափազանց սխալված կը լինի իր դիրքի առաւելութեան մասին: Եւրոպական պետութիւնները բացարձակ իրանց նպատակ են դարձրել վերականգնել statu quo եզրպատկան մէջ: Եթէ Բ. Գուռը կը ձգտի նոյն

նպատակին, նա մեծ պաշտպանութիւն կը զանի միացեալ Եւրոպայի կողմից: Այն հետևանքները, որոնց հասաւ Կոնֆերանցային և ինքիվի համաձայնութիւնը անկարող է գործերի հաստատ և ապահով դրութեան գրաւական լինել: Արաբի-փաշայի յարաբերութիւնները սուլթանի հետ երկմտի և կասկածելի են: Բ. Գուռը իր վրա մեծ պատասխանատուութիւն կառնի, եթէ նա առանձնապէս կը ձեռնարկի եզրպատկան հարցի լուծմանը:»

Կարգադրութեան վերականգնելը Եզրպատկան մէջ կարելի է միայն միացեալ Եւրոպայի օգնութեամբ և այդ նպատակին հասնելու համար ամենայնամիտ միջոցը եւրոպական կոնֆերանցային է: Փարիզի „Temps“ լրագիրը Բերլինից մի հեռագիր է ստացել, որ հաղորդում է, թէ այդ յօդուածը կատարելապէս համապատասխանում է իշխան Բիսմարկի կարծիքներին եզրպատկան հարցի մասին:

ԱՆԳԼԻԱ

Իրլանդական պառագամաւորները դարձեալ դիմեցին իրանց ընդունված միջոցին երկաւրանել պարլամենտական փիւմբանութիւնները, գրում է „Times“: Իրլանդայի մէջ պատահած վերջին անցքերի պատճառով միմեանցից բաժանված ամբողջութեանը նորից միացան, որպէս զի խանգարեն իրլանդական ստիպողական օրինագծի բուէարկութեանը: Համայնքների ժողովը նրանց այնու ամենայնիւ յաղթեց: 23 ժամ անընդհատ տեղը պարլամենտի նիստը վերջացաւ նրանով, որ ժողովը ընդունեց ստիպողական օրէնքների բոլոր յօդուածները և Կլաքսոնի առաջարկութեամբ ձայնի իրաւունքը խլեց իրլանդական մի քանի պատգամաւորներից: Պարլամենտական կոնֆերվերջացաւ մեծամասնութեան կատարեալ յաղթութեամբ:

Այն պայմանները, որոնցով շրջապատված էր այդ յաղթութիւնը, մի անգամ էլ ապացուցին համայնքների ժողովի կանոնադրութեան վերաբնութեան անհրաժեշտութիւնը, որպէս զի մեծամասնութիւնը միշտ միջոց ունեցայ փիւմբանութիւնները վերջացրած յայտնել: Կլաքսոնի վաղուց ցոյց էր տալիս այդ անհրաժեշտութիւնը, բայց ժողովը մինչև այժմ չէր կամենում կատարել նրա պահանջները: Վերջին նիստը, որ 32 ժամ տևեց, երեւի կազմէ պատգամաւորների վրա, որոնք պէտք է հասկանան, թէ կառավարութեան համար անհրաժեշտ է որքան կարելի է շուտ վերջացնել իրլանդական հարցի դժուարութիւնները, որովհետև նրան հարկաւոր է ազատ լինել եզրպատկան գործերով զբաղվելու համար:

Այդպիսի դժուարութիւններից մէկն այն է, որ իրլանդական պատգամաւորները զիտմամբ երկարացնում են համայնքների ժողովի փիւմբանութիւնները: Իրլանդական պատգամաւորները մի առանձին դիրք են ստացել կարողանալով մէկ ու կէս օր երկարացնել ժողովի նիստը: Իւրաքանչիւր այդպիսի նիստից յետոյ իրլանդայի մէջ տեղական պատգամաւորների հեղինակութիւնը մեծանում է: Կլաքսոնի առաջարկած փոփոխութիւնը համայնքների ժողովի կանոնադրութեան մէջ վերջ կը դնի այդ գործին և միջոց կը տայ անգլիական կառավարութեանը գործադրել իրլանդայի մէջ ստիպողական օրէնքները:

Արևմտեան մամուլը վաղուց այն կարծիքի է, որ հէնց որ իրլանդայի մէջ կը սկսվի ստիպողական օրէնքների գործադրութիւնը, անյապաղ այնտեղ պատգամաւորութիւնը կը սկսվի: Հաւանական է, որ իրլանդական շարժման առաջնորդները իրանք են տարածում այդպիսի լուրերը, որովհետև հարցի վերաբերյալ իրանք են անհրաժեշտ և անկասկածաբար իրաւունք ունեն: Արաբի-փաշայի յարաբերութիւնները սուլթանի հետ երկմտի և կասկածելի են: Բ. Գուռը իր վրա մեծ պատասխանատուութիւն կառնի, եթէ նա առանձնապէս կը ձեռնարկի եզրպատկան հարցի լուծմանը:»

Կլաքսոնի միջնորդութեան դրութիւնը անկասկած շատ դժուար է, բայց նա այն առաւելութիւնը ունի եզրպատկան հարցով հետաքրքրված միւս պետութիւններից, որ զիտէ, թէ ինչ է կամենում և գործում է վաղուց փնտված նախագծի համեմատ, մինչդեռ միւս պետութիւնները իրանց յոյսը պատահանքների վրա են դնում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Köln. Zeitung» լրագիրն Ալեքսանդրիայից հեռագրում են, որ եւրոպացիների դաղթականութիւնը չարոնակվում է 50 հազարից աւելի քրիստոնեաներ թողնելու երկրը, զեռ էլի 2000 մարդիկ մնում են: Տեղացիների տրամադրութիւնը թշնամական է:

«Vrijdood» հեռագրական ընկերութեանը Փարիզից հեռագրում են յունիսի 22-ից հետեւալը: Սենատի յանձնաժողովը, քննելով ապահարգանքի մասին օրինագիծը, սենատի անդամների 2/3 մասը օրինագիծի դէմ ձայն տուեց:

«Gaulois» լրագրի Լոնդոնեան թղթակիցը յունիսի 30-ին ուղարկած հեռագրում հաղորդում է Գիտոնի նախկին նախագահ Գարֆիլդի սպանողի պատժի մասին հետեւեալ մանրամասնութիւնները: «Մահուան պատիժը կատարվեցաւ յունիսի 30-ին կէսօրից յետոյ մէկ և կէս ժամին Վալինգտոնի կենտրոնական բանտի բակում: Պատժից մի շաբաթ առաջ, իմանալով, որ իր միջնորդութիւնը ներման մասին, մերժված է, Գիտոն կորցրեց իր հանգստութիւնը և անձնավստահութիւնը: Նրա նրան փոխադրեցին մահուան դատապարտվածների համար յատկացրած սենակը, նա սկսեց լալ, և ահապէս դուժարներ էր խոտախում նրան, ով կօքնէր նրան փախչել: Ժամանակ առ ժամանակ նա անէծքներ էր թափում իր դատաւորների վրա, նախագահ Արտուրի վրա, սենատոր Կոնկլինի և այլ իր Վեյդ բարեկամներին: Վրա, որոնք թողնելին նրան այն բանից յետոյ, երբ օգտվեցին նրա գործողութիւնից: Պատժից առաջ մի քանի օր նա կրօնական եռանդ ցոյց տուեց: Այն վայրկեան, երբ դարձեւ չուանը գցում էր նրա վզին, Գիտոն աշխատում էր խօսել պատժի վկաների հետ, բայց թմբուկների թնդիւնը խաղցրեց նրա ձայնը, դաժնոր շուտ տուեց այն աթոռը, որի վրա կանգնած էր մահապարտը, և երկրային արդարադատութեան վերջին գործողութիւնը կատարվեցաւ:»

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հռոմէական կողմից: Հռոմէական մի լրագիր հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնները կարդինալների եկամուտների մասին: Կարդինալական ամենափոքրիկ ունեւոր 30,000 ֆրանկ է, այդ ունեւորն աւելացվում է և ճաշի համար տրվող 4,000 ֆրանկ: Ամեն նոր տեղ ստացող եպիսկոպոսից աւելում է այդ բանին համար մի յայտնի նշանակված տակաւ, այդ փողերը բանկն են դրվում և իւրաքանչիւր չորս ամսից յետոյ այդպիսով հաւաքված գումարը բաժանվում է կարդինալների մէջ: Իւրաքանչիւր պատարագի համար կարդինալը 100 ֆրանկ է ստանում, իսկ պապը—1,000 ֆրանկ: Կարդինալների մեծ մասը բացի դրանից ուրիշ եկամուտներ էլ ունեն: Ամենահարուստ կարդինալներ համարվում են Սակկոմի, Մոնտի, Գեյ-Լուկա, Բիլի, Լոզովի, Եակօրինի և Սիմօնի: Աղքատ չէ և պապի հանդիսապետը, սրբազան Կատալդի, որը փողով ընծայ է ստա-

նում պապի շնորհած իւրաքանչիւր շքանշանի կամ տիպոսի համար:

Ամսագիրները և գրքերը Թիւրքիայում և Եգիպտոսում: Վերջին տեղեկութիւնները հիման վրա, Կ. Պոլսում հրատարակվում են ինն լրագիրներ թիւրքաց լեզուով, որոնցից երեքը կիսապաշտօնական բնաւորութիւն ունեն, մէկը արաբական լեզուով, մէկը պարսկական, մէկը ֆրանսիական, եթէ յունաց, մէկը հայոց և երկուսը սպանիական հրէաների լեզուով: Եզրպատկան արաբական հինգ լրագիրներ են հրատարակվում, մէկը երկու լեզուով—արաբական և թիւրքաց, երեքը ֆրանսիական, երկու իտալական, մէկ անգլիական և մէկ յունական: Բէյրութում համարում են արաբական մի լրագիրներ, մէկը արաբ-ֆրանսիական, և երեքը շաբաթական արաբական լրագիրներ: Զմիւռնիայում հրատարակվում են մէկ թիւրքաց և մէկ ֆրանսիական լրագիր, երկու յունական և մէկ հայերէն: Սյոնի-կում հրատարակվում է մէկ թիւրքաց և մէկ յունական, Արեւելեան Ռումէլիայում—մէկ բուլղարական լրագիր ֆրանսիական լեզուով, մէկ յոյն-ֆրանսիական և մէկ թիւրքաց լրագիր: Բայց այդ բոլոր լրագիրներից Օտտոմանեան կայսրութեան 21 նահանգների զխաւոր կետերում հրատարակվում են պաշտօնական լրագիրներ, որոնք պարտում են տեղական գործերով: Կ. Պոլսում 45 տպարաններ կան, Գալատայում և Բէրայում—23: Երկու վերջին տարիների ընթացքում նրանք իւրյա են ընծայել 205 հեղինակութիւններ, մասամբ ինքնուրոյն, և միևնույն ժամանակ մեծ քանակութեամբ թարգմանութիւններ ֆրանսերէնից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունիսի: „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ հրատարակված է. 'ի նկատի առնելով Սիբերիայի անուան ժողովրդական նշանակութիւնը և կամենալով, որ զինուորական փառքը միացնէ նաւատորմը և զօրքերին, Թագաւոր Կայսրը հրամայեց „Вѣстн.“ նաւը այսուհետեւ „Սիբերիայի“ անուանել:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՄ, 29 յունիսի: Դոմպպետ Սէյմուր յայտնեց, որ այսօր յունիսի 27-ին առաւօտեան չորս ժամին կը սկսի ուժբակոծել քաղաքը: Բոլոր հիւպատոսները և եւրոպացիները նաւերի վրա տեղափոխեցան:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՄ, 29 յունիսի: Այսօր առաւօտեան 7 ժամին անգլիական նաւատորմը սկսեց ուժբակոծել Ալեքսանդրիա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունիսի: Երեկ և երեք Սուբերիայի եկեղեցում, որտեղ տարված էր Սիբերիայի մարմինը, կատարվեցաւ թաղման ժամերգութիւնը: Դրանից առաջ ամբողջ գիշերը անդադար ժողովուրդը հրաժարական ողջոյն էր տալիս հանգուցեալին: Եկեղեցին կատարեալապէս ծածկված է պսակներով և ծաղիկներով: Թաղման մաղթանքը առաւօտը կատարեց սրբազան Ամիրսի Գիտորովի, որին օգնում էր բաղմաթիւ հոգեւորականութիւնը: Ներկայ էին Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը Աւագը, Ալեքսէյ Ալեքսանդրովիչ, Եւգենի Լէյստեբերգսկի, Վասնովսկի, Բադեցկի, Չերնեւսկի, Ալեքսէր-Բերդ, Բարանով, Բրեվերն, Կոլչուրովսկի, Պերֆիլեւ, Չիչերին, զենեարաններ, պրօֆեսորներ, զինուորական ուսումնարանների և զօրքերի զանազան բաժինների պատգամաւորներ, հանգուցեալի պատերազմական ընկերները: Եկեղեցու մէջ և դուրսը անթիւ ժողովուրդ կար: Երբ յուզարկաւորութիւնը եկեղեցուց ուղեւորեցաւ դէպի Բեադանի երկաթուղին, որտեղից հանգուցեալին տանում են իր „Սպասկոն“ կառուածքը, զօրքերը և բաղմաթիւ ժողովուրդը կարգով կանգնած էին ջր տեսնված տեսարան էր: Կատարեալ ժողովրդական ընդ-

Հանուր վիշտ էր տիրում: 32 մեծ պսակներ կան. նրանցից աչքի են ընկնում Ահադիմայի, զվառոր շտաբի, Մինսկի և Վորոնեժի պսակները: Ոսկեզած պատգարակը Գեորգեան ժապավենով, որի վրա գրված էր դադաղը, տանում էին Մեծ իշխանները և զինեղանքները: Զուարճություն բոլոր տեղերը փակված են: Երեկ աշխարհահանգստին հոգևոր կոնցերտի ժամանակ հասարակությունը պահանջեց կատարել և հոգեհանգստի արթնքը ի յիշատակ Սկոբելովի և ամենքը վեր կացան զվարկները հանած: Հանգուցեալի պատկերները սաստիկ տարածվում են: Ամեն տեղից ցաւակցական և հոգեհանգստի մասին հեռագիրներ են ստացվում:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՄՈՒԻ ՏԱԿԻՑ դուրս եկաւ «Էն էլ իմ սաղը»: Ազգային, սիրոյ, ժողովրդական, երգիծարանական... բանաստեղծութեանց I հատորը: Գինն է ճանապարհի ծախքով հանդերձ 1 ռուբլ:

Օտարաբարդացիք թող բարեհաճեն դիմել հետեւեալ հասցեներին՝ Ивану Семёновичу Степанову (на фабрике Сали-оглы) կամ ուղղակի հեղինակին՝ через Просковейское почтовое отдѣл. въ гор. Св.-Креста (Ставропольск. губ. на Кавказѣ) учителю Семену Сафарянцу.

Թիֆլիսում կարելի է ստանալ և Սալի-Օզլու ծխախոտի խանութներում—Գոյովինսկի պրոսպեկտի վրա Շիսկի տանը և Սիսի փողոցի վրայ Անանովի նոր շինութեանում: Ծախվում է և զրաւաճառների մօտ:

1—5

ՍՏԱՅՎԱԾ Է գրելու թուղթ առաջին տեսակի 4 ռ. 50 կ. օգման, բրնձ 6, 8 և 9 կ. ֆունտը, խնայի զինի շերտի դէմ 1 ռ. 40 կ. շերտ, փոշի տարափոխի հիւանդութեան դէմ, լուացքի և սամվար սրբելու համար: **ԱՆԳՂԻՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷՅ:** Նոյն տեղը լէպեռլաներ, ցիտրոս և շերքեա ծարաւի դէմ: Ծածկոցներ 4 ռ., շօկոյադ երկու բաժակի համար 5 կոպէկ: Երկաթէ մահճակալներ 8 ռ. և այլն:

10—10

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գոյովինսկի պրոսպեկտի վրա, սույն ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներէ:

ՄՕԾԱԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ

Դ Ե Ղ Ը

24 հատը արժէ 90 կօպ.

Ե Փ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

Դ Է Պ Օ Յ Ո Ւ Մ:

1—10 (2. է.)

Ներսիսեան դպրանոցի բարձր դաստան աշակերտներին մինը կամենում է պատրաստել աշակերտներ և աշակերտուհիներ՝ բոլոր ձայ դպրոցների ստորին և միջին դասատանց համար: Ցանկացողք թող դիմեն Ծովինսկի կարվանսարայում պ. Գրիգոր Կակեանի խանութը № 1.

Въ Редакціи газеты

«МПАКЪ»

Продается

БРОШЮРА

«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԹԻՖԼԻՍՈՒՄ ԶՐԱՆՑԻ ԿԱՌՈՒՅԱԼՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը, հրաւիրելով ցանկացողներին յանձն առնել ջրանցքի կառուցումը Թիֆլիսում, յայտնում է ընդհանուր դիտութեանը որ առաջարկութիւնների ընդունելութիւնը շարունակվելու է քաղաքային վարչութեան մէջ մինչև 1/13 սեպտեմբեր ամսի 1882 թի:

Պրօէկտի, նախահաշուի և սկզբնական պայմանների հետ կարելի է ծանօթանալ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ.

Թիֆլիսի, Ս. Պետերբուրգի, Մոսկվայի և Օդէսայի քաղաքային վարչութիւնների մէջ, նոյնպէս և վարչապա քաղաքի նախագահի կանցլիարիայում:

ԱՐՏԱՍՏԱՄԱՆՈՒՄ.

ՓԱՐԻՋՈՒՄ «Ingenieur» լրագրի խմբագրութեան մէջ (Rue Fidelité, 9) 10-րդ ԳՕՆՈՒՄ «Engineering» լրագրի խմբագրութեան մէջ (35—36 Bedford Street, Strand, W. C.), ԲԵՐԼԻՆՈՒՄ. A la Direction du Commerce et des Consuls, au Departement des affaires Etrangères, ՎԻԵՆԱՅՈՒՄ «Allgemeine Bauzeitung» լրագրի խմբագրատան մէջ, (Waldheims Verlag, Taborstrasse, 52) և ՎԵՐՋԱԿԱ ԲԵՐԼԻՆՈՒՄ «Deutsche Bauzeitung» լրագրի խմբագրութեան մէջ (Bahnhofstrasse, 4, Berlin S. W.)

3—3

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

S'adresser à F. Salles, avocat

1. Neuermarkt 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

Առաջիկայ Օգոստոս ամսից հրատարակուելու է Թիֆլիսում մեր խմբագրութեամբ «ՎԱՐՃԱՐԱՆ» մանկավարժական ամսագիրը հետեւեալ ծրագրով՝

ա. Ազգիս վեհափառ հայրապետի և թեմական վերատեսուչների կարգադրութիւնները ազգային ուսումնարանաց վերաբերութեամբ:

բ. ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածներ մանկավարժական բովանդակութեամբ:

գ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածներ ազգային պատմութեան, աշխարհագրութեան, գրականութեան, տոհմագրութեան և լեզուի վերաբերութեամբ:

դ. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ—քննական յօդուածներ դասագրքերի և մանկական ընթերցանութեան գրքերի:

ե. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ—դանազան տեղեկութիւններ ուսումնարանական կեանքից:

զ. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ—վեպեր, զրոյցներ և այլն մանկանց ընթերցանութեան համար:

է. Հանդիմաններ, խնդիրներ և խաղեր մանկանց համար:

ը. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մեր ամսագրին խոստացել են գործակցել ազգային ուսումնարանների մէջ գործող յայտնի անձինք, որոնք ծանօթ են հայ հասարակութեանը իւրեանց աշխատութիւններով մանկավարժական ասպարիզում:

«Վարժարանը» կը հրատարակուի ամիսը մի անգամ, բացի յունիս և յուլիս ամիսներից. իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի չորս տպագրական թերթից in 8°:

Առաջին համարը լոյս կը տեսնի օգոստոսի 15-ին:

Վարժարանի տարեկան գինն է թէ՛ Թիֆլիսում և թէ՛ այլ քաղաքներում Հինգ ռուբլի:

Ստորագրուել կարելի է Թիֆլիսում խմբագրութեան գրասենեակում (Սաղովայա փողոց, տուն Մարգարեանի) և պարսն Եփրեմ Ծառուբեանի մօտ (Գօրգոյիսյա փողոց): Իսկ օտարաքաղաքացիք դիմելու են խմբագրութեան հետեւեալ հասցեով՝ Тифлисъ, въ Редакцію педагогическаго журнала «Варжаранъ». Tiflis Redaction du journal pedagogique «Varjaran».

Խմբագիր—հրատարակող ՆԻԿՈԼԱՅՈՍ ԽՈՍՐՈՎԱՆ

2—3

ԱՆԿԻՎՈՎԱԿԱՆ ՊՐԻՎԱԶԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽԱՄԱԿԱԼՈՒԹԱՆ ԿՈՎԿԱՏԱՆ ՆԱԽԿԻՆ ՓՈԽՐԱԳԱՅԻ Թղլաուութեան հիման վրա և 1876 թ. հրատարակված հասարակական հոլանաւորութեան կանոնների 941 յօդուածի համեմատ ընդունում է ՄՈՒՏԲԵՐ ՇԱՀԵՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ինչպէս մանաւոր ԱՆՁՆԵՐՆԵՐԻՅ, նոյնպէս և կառավարչական ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ, հասարակական և դասական դուժմաներ կարգադրողներից: ՆԵՐԿԱՅԱՑԱՐԱՅ ԳՈՒՄՆԵՐՆԵՐԻՅ ՎՃԱՐՈՒՄ Է

ա) Անժամանակ, այսինքն ցաւահանջ..... 4% տարեկան

բ) մէկ երկու և երեք տարով..... 4 1/2 % "

գ) չորս և հինգ տարով..... 5 % "

դ) վեց և մինչև տասներկու տարի..... 5 1/2 % "

ե) տասներկու տարով և ավելի..... 6 % "

ՏՈՎՈՒՆԵՐԻ ՀԱՏՈՒՅՈՒՄՆ և մուտքերի վերադարձները կատարվում է ԱՄՆՆՈՐ, բացի շարաթ և տօն օրերից:

2—3

ՄԻՋԻ ԲՈՂՈՅ, ԿԱԹՕԼԻԷՍԿԱՅ ԲՈՂՈՅԻ ԱՆԿԻՆ Ձ 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրակարար 8—30 ռ., չափազանց 250—25 ռ., սակվածներ 1. 30—12 ռ., սոււն դուկն եր ճանապարհի 6—35 ռ., մարմններ (погребицы) 6—25 ռ., սա մօ վարն եր 60 կ.—1.25 ֆունտը, կուլաների պինձէ ամաններ, գերմանիայի երկաթէ ճամպի ամաններ. ու մի վալն ի կն եր մրա մօ ռն ի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լուսանի 6—32 ռ., ու զվոլվէրն եր ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պատրաններ. (գուլաներ) ընդօղկերի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրուս և թամբաուս կուլանաթի գրկի պապիրոսի. 5,000 ՖՈՒՆՏ թէ՛ (չայ) եւ. ՊԱՊԱՎՆԵՐԻ, բիսկիւտ. (սուխար չայու և կաֆէի) լինէմի. կօֆէ լինէմի և Միկէլանի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 կ. հայկիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրոբկայ գինեղաններ, համբայն և դարեջրի (для зельтерских вод и пива) դուլթուկ (пучки), պալանտներ սամվարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուլթուր. գրչակութիւն 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դանակ հացի 20 կ.—1 ռ., հատր, կուխանի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կարելու մաշինայ. Անգլիական ու թաներ, Բրիտանական չայնիներ, կաֆէիներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլաներ—ջուր մաքրելու, կրակմալ կարթէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակը, թուղթ փոշոյի, կանվերտներ, սուրճուշ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակութ, քարեալատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիներ, գրչակներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչալի և բրիտանական դուլթուր 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չուլմիչէք 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուխտ, պոլսապոլաններ վարչալու, Ռեզիտի ԿԱՌՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գուլաններ, գնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեւի և չորի. սանդղեր շիրմայու ոսկրէ, դուտապերչովի և փայտէ, չոտկաներ գլխի, չորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (дугара) մատոկի կօճի և շալէ (гарусь) ֆէլչատիէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գուլաններէնի տարաններ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտալէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտալէտ պարաշիներ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՍՈՐԻՅ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զինով վերցիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԻՆ ՏԵՐ ՆԻԿՈԼՈՒՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում Ձ 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

83—180

ՄԻՋԻ ԲՈՂՈՅ, ԿԱԹՕԼԻԷՍԿԱՅ ԲՈՂՈՅԻ ԱՆԿԻՆ Ձ 13.